02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

38 (1437) • 11 հոկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Կարգապահական հանձնաժողովի նիստում

Հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Ղուկասյանը:

Մասնակցում էին ոստիկանության ներքին անվտանգության, հասարակական կարգի ապահովման վարչությունների պետերը, իրավաբանական վարչության պետի տեղակալը, կառավարության ներկայացուցիչն ու ոստիկանության կարգապահական հանձնաժողովում ընդգրկված հասարակական կազմակերպությունների անդամներ:

Օրակարգում ոստիկանության չորս աշխատակիցների նկատմամբ իրականացված ծառայողական քննության նյութերի եւ եզրակացությունների քննարկումն էր:

Դրապարակային, թափանցիկ, հասարակական ընդգրկվածությամբ գործող ոստիկանության կարգապահական հանձնաժողովը կոչված է ապահովելու հասարակական կարգուկանոն պահպանող ծառայողների գործունեության պրոֆեսիոնալ, իրավաչափ քննություն եւ վերահսկողություն՝ բացառելով կամայականությունները, ինչպես քաղաքացու, այնպես էլ ոստիկանության ծառայողի իրավունքների խախտումները:

Ոստիկանության կարգապահական հանձնաժողովը պարզելով փաստական հանգամանքները՝ որոշում կայացրեց դիմել ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարին՝ չորս ծառայողի նկատմամբ կիրառել «Ոստիկանությունում ծառայությունից ազատում» կարգապահական տույժը:

Խոշոր չափերի չարաշահումներ են արձանագրվել

Ոստիկանության ՀՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարը եւ վարչական շրջանի մի շարք պաշտոնատար անձինք, չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը, 2012-2018 թթ. ընթացքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տարաբնույթ թույլտվություններ տրամադրելու, ինչպես եւ վարչական շենքում տրված տարածքների հետագա օգտագործման համար, բացի պետական տուրքերից եւ վարձավճարներից, պարտադրել են հավելյալ գումարներ վճարել «Նոր Նորք» զարգացման հիմնադրամին՝ հակառակ դեպքում սպառնալով լուծարել պայմանագիրը: Արդյունքում՝ Նոր Նորքի վարչական շրջանի առանձին պաշտոնատար անձինք, այս պահին քննությանը հայտնի տվյալների հիման վրա, նրանց պարտադրել են հիմնադրամին վճարել մոտ 11 միլիոն 250 հազար դրամ:

էջ 2

Յուրացման դեպք է բացահայտվել

Ոստիկանության ՀՀԴՊ գլխավոր վարչությունում փաստական տվյալներ են ձեռք բերվել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Տնային պայմաններում միայնակ տարեցների եւ հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ապօրինությունների վերաբերյալ:

Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ 2012 թ. մինչեւ վերջերս նա հափշտակել է 28 միլիոն 72 հազար դրամ: ՊՈԱԿ-ի տարբեր հաստիքներում հրամանագրել է իր հարազատներին, որոնք փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձի եւ պարգեւավճարի գումարները՝ 25 միլիոն 369 հազար դրամ, յուրացրել է: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ կազմակերպության հաշվեկշռում գտնվող անսարք երկու տրանսպորտային միջոցի չշահագործվելու պայմաններում 2016-2019 թթ. ընթացքում նշված ավտոմեքենաների երթուղային թերթերում, պահանջագրերում եւ վառելիքի շարժի վերաբերյալ տեղեկագրերում մտցրել է կեղծ տեղեկություններ, ինչի արդյունքում եւ յուրացրել է տրանսպորտային միջոցների համար ՊՈԱԿ-ի կողմից ձեռք բերված 2 միլիոն 708 հազար դրամի՝ 7550 լիտր բենզինի կտրոններ:

Հափշտակվել են նաեւ կազմակերպության հաշվեկշռում գտնվող, սակայն տնօրենի եւ նրա ընտանիքի անդամների կարիքների համար շահագործված ավտոմեքենայի համար ՊՈԱԿ-ի դրամարկղից դուրս գրված 3010 լիտր բենզինի, ինչպես եւ վարորդի անվամբ դուրս գրված աշխատավարձի եւ պարգեւավճարի գումարները՝ ընդհանուր 3 միլիոն 916 հազար դրամ:

Քրեական գործ է հարուցվել:

Ողբերգական միջադեպ Վանաձորում

Հոկտեմբերի 4-ին, կեսգիշերին մոտ, Վանաձորի Միչուրինի փողոցի մի տնից հրազենային վնասվածքներով հիվանդանոց էին տեղափոխվել վեց երիտասարդ: Նրանցից մեկը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել էր:

Ոստիկանության Տարոնի բաժնում ահազանգը հնչելուն պես օպերատիվ խումբը մեկնեց բուժհաստատություն եւ այն բնակարան, որտեղից երիտասարդները տեղափոխվել էին հիվանդանոց: Տան նկուղային հարկում հայտնաբերվեց երկու երիտասարդի դի՝ դարձյալ հրազենային վնասվածքներով: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին տարբեր տրամաչափի պարկուճներ, արնանման հետքեր, դանակներ, ներարկիչներ, «Մակարով» ատրճանակ, իսկ այգում՝ «Կալաշնիկով» ինքնաձիգ:

Այդ ընթացքում Տարոնի բաժնի քրեական հետախույզներն արդեն բերման էին ենթարկել Վանաձորի բնակիչ, 46-ամյա մի տղամարդու: Օպերատիվ խումբը դեպքի վայր էր հասել ահազանգից րոպեներ անց եւ տեղում որոշակի պարզել կատարվածի հանգամանքները՝ որպես կասկածյալ բերման ենթարկելով հիշյալ տղամարդուն:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ ձեռք բերվեցին հոկտեմբերի 4-ի գիշերը Վանաձորի Միչուրինի փողոցի տներից մեկի նկուղում տեղի ունեցած զինված միջադեպի հանգամանքների վերաբերյալ, որոնց հիման վրա ձերբակալված տղամարդուն մեղադրանք առաջադրվեց: Նա կալանավորվեց:

Օպերատիվ-քննչական միջոցառումները շարունակվում են:

Մարդու օրգանի ապօրինի վաճառք

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ ՀՀ երկու քաղաքացի ներգրավվել են օրգանների ապօրինի շրջանառության մեջ:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները ձեռնարկեցին լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ տեղեկությունների իսկությունը եւ նշված անձանց ինքնությունը պարզելու ուղղությամբ: Միջոցառումներին մասնակցեցին նաեւ ոստիկանության Աշոցքի բաժնի ծառայողները:

էջ 3

122 միլիոն դրամ էր հափշտակել

Սեպտեմբերի 28-ին ոստիկանության Արտաշատի բաժնում գրություն էր ստացվել, որ բանկերից մեկի Արտաշատի մասնաճյուղի դրամարկղի ստուգման ժամանակ պարզվել է, որ հափշտակվել է 122 միլիոն դրամ:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում Արտաշատի ոստիկանները փաստական տվյալներ ձեռք բերեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնության վերաբերյալ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 6-ին կասկածյալը, որը հիշյալ մասնաճյուղի կառավարիչն է, Երեւանում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արտաշատի բաժին: Նա ներկայացվել է դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Նախաքննությունը շարունակվում է:

Տասնյակ քաղաքացիներ էին տուժել

Քաղաքացիների անվամբ հաշվառել էին մեքենան, ապա այն գրավադրել վարկային կազմակերպությունում:

էջ 2

Համայնքի ղեկավարի ապօրինությունները

Գերեզմանատունը ցանկապատելու պատրվակով բյուջեից դուրս էր գրել 3 միլիոն դրամ եւ յուրացրել:

էջ 3

Զգուշացեք ավտոմեքենայից

Դանցագործների մարտավարությունը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ստեղծել դժվար հաղթահարելի արգելքներ:

էջ 6

Օպերատիվ

Ինչպես դիմել ոստիկանություն

Հանցագործության, վարչական իրավախախտումների, հասարակական կարգի խախտման, անձի իրավունքներն ու ազատությունները ոտնահարելու, ինչպես եւ այլ խնդրահարույց իրավիճակների դեպքերում քաղաքացիները ոստիկանություն են դիմում: Սակայն քչերը գիտեն ոստիկանությունում հաղորդում տալու, դիմում-բողոքներ ներկայացնելու կարգը:

Պատահել է՝ 1-02 զանգելուց հետո դեպքի վայր մեկնած ոստիկաններին տուժողը հայտնել է, թե չի ցանկանում բացատրություն տալ: «Հեռախոսով արդեն ամեն ինչ ասել եմ, էլ ի՞նչ բացատրություն»,- դժգոհել է: «Հրաժարվո՞ւմ եք» հարցին էլ պատասխանել է՝ չեմ հրաժարվում, բայց չեմ էլ գրում: Ու ոստիկանության ծառայողն աշխատանքը դեռ չսկսած՝ կանգնում է արհեստածին դժվարությունների առաջ:

Եղել են դեպքեր, երբ ահազանգողը դուռը չի բացել. «Ասացի հարեւանին կարգի հրավիրեք, ոչ թե ինձ»,- ասել է, ոստիկաններին սպառնացել, որ եթե մեկ էլ դուռը ծեծեն, ոստիկանություն կզանգի, մինչդեռ սահմանված կարգի համաձայն՝ եթե ոստիկանություն ես ահազանգել, ապա պարտավոր ես մանրամասնել, թե ինչի համար:

Ոստիկանությունն այսօր հասանելի է, քան երբեւէ: Քաղաքացին կարող է 1-02 զանգել, դիմել համայնքային ոստիկանության հենակետ, հարց ուղղել կամ կատարվածի մասին տեղեկանալ ու տեղեկացնել իրավապահներին ոստիկանության կայքի միջոցով, զանգել կամ գնալ այն բաժին, որի կողմից սպասարկվող տարածքում կատարվել է դեպքը:

Եվ, այսուամենայնիվ, հետաքրքիր է՝ ոստիկանությունում քաղաքացուց ինչպես եւ ինչ սկզբունքով է հաղորդում կամ դիմում ընդունվում:

Քաղաքացին կարող է դիմումը գրել ե՛ւ տանը, ե՛ւ ոստիկանության բաժնում: Անկախ նրանից՝ դիմումը ոստիկանություն է բերվել առձեռն, թե ուղարկվել փոստային կապով, քարտուղարությունում այն մուտքագրվում է դիմումների հաշվառման այբբենական մատյանում, ինչից հետո ոստիկանության բաժնի պետի որոշմամբ հանձնվում է համապատասխան ստորաբաժանման ծառայողին: Եթե դիմումում հանցագործության հատկանիշներ չեն պարունակվում, ապա այն մակագրվում է համայնքային ոստիկանության բաժանմունքի պետին, նա էլ դիմումի կատարումը հանձնարարում է տվյալ տեղամասը սպասարկող տեսուչին: Հետաքննության բաժանմունքի պետին մակագրվում են այն դիմումները, որոնք առերեւույթ հանցագործության հատկանիշներ են պարունակում, եւ այս դեպքում դիմումի կատարումը հանձնարարվում է նշված օրը հերթապահություն իրականացնող հետաքննության տեսուչին:

Դիմումը բաժին ներկայացնելուց հետո որոշ քաղաքացիներ կարծում են, թե հարցի լուծումը կամ պատասխանը կստանան հենց նույն օրը, ժամեր անց, մինչդեռ կան դիմումներ, որոնցով զբաղվելու համար առնվազն երկուսից-երեք օր է պահանջվում, որոշ դիմումների դեպքում՝ նույնիսկ ավելի:

Հաճախ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվում է, որ դիմումատուի հարցը պետք է լուծվի դատական կարգով: Բերենք մեկ օրինակ. ասենք՝ դիմումը սեփականության իրավունքի վիճարկման հարցով է: Քաղաքացին դիմում է ոստիկանություն, որպեսզի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանից կամ տարածքից ներխուժումը վերացվի: Այս պարագայում ոստիկանությունը առաջնորդվում է քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2007 թվականի թիվ 797 Լ որոշման դրույթներով: Մասնավորապես՝ դիմում-բողոքն ստանալուց հետո, երեք ժամվա ընթացքում, ոստիկանության ծառայողը մեկնում է հիշյալ բնակարան կամ տարածք, պարզում՝ ով է նշված հասցեի օրինական տիրապետողը եւ ում է այն պատկանում սեփականության իրավունքով: Սակայն հաճախ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվում է, որ տվյալ տարածքի հետ կապված սեփականության իրավունքն արդեն վիճարկվում է դատական կարգով: Այս պարագայում դիմումատուին պարզաբանվում է, որ նշված հարցը ենթակա է լուծման՝ քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով, եւ նման պարագայում ոստիկանությունը որեւիցե լիազորություն չունի միջամտելու:

Բերված օրինակներն ու մանրամասները հետապնդում են մեկ նպատակ. բարձրացնել մեր քաղաքացիների իրավագիտակցությունը: Եթե նյութերի նախապատրաստման անհրաժեշտությունից ելնելով՝ հարկավոր է բացատրություն գրել, ապա դրանում ոչ մի վատ բան չկա, պետք չէ զլանալ, վախենալ: Ոստիկանությունը ձեր իրավունքներն է պաշտպանում, պարզապես դուք ունեք նաեւ պարտականություններ:

Հենրիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Հենրիկ Պետրոսյանը:

Ծնվել է 1942 թ., Թբիլիսիում:

1967-1969 թթ. սովորել է ԽՍՀՄ ՆԳՆ Երեւանի միլիցիայի դպրոցում, որն ավարտելուց հետո, որպես քրեական հետախույզ, այնուհետեւ՝ շտաբի պետ, ծառայության է անցել միլիցիայի տրանսպորտի վարչությունում: 1980-1983 թթ. ՆԳՆ Երեւան քաղաքի վարչության շտաբում աշխատելուց հետո ղեկավարել է Սպանդարյան շրջանի ՆԳ բաժնի պահպանության բաժինը:

1986-1994 թթ. Սպանդարյան շրջանի ՆԳ բաժնի պետի տեղակալն էր: 1994-ից մինչեւ 2000 թվականը՝ մինչեւ թոշակի անցնելը, աշխատել է ՆԳՆ շտաբում:

Որտեղ էլ աշխատել է Հենրիկ Պետրոսյանը, իրեն դրսեւորել է որպես բանիմաց մասնագետ, սկզբունքային սպա, վստահելի գործընկեր, պատրաստակամ, սրտացավ մարդ:

Այդպիսին էլ կմնա իրեն ճանաչողների հիշողության մեջ:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Գողոնը վերադարձվեց տուժողներին

Հոկտեմբերի 3-ի գիշերը մի կին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում տվեց, որ ուսապարկից գողացել են բջջային հեռախոսը: Հաղորդումից ընդամենը երկու ժամ անց գրպանահատությունը բացահայտվեց: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը. Երեւանի 43-ամյա բնակիչը Հանրապետության հրապարակում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց բաժին: Նա տվեց խոստովանական բացատրություն: Քրեական հետախույզների օպերատիվ գործողությունների արդյունքում նույնիսկ չէր հասցրել գողոնն իրացնել: Բջջային հեռախոսը հայտնաբերվել ու վերադարձվել է տուժողին:

Հոկտեմբերի 4-ին մի կին ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում տվեց, որ երթուղային ավտոբուսում պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող ու բանկային քարտեր:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները հանցագործությունը բացահայտեցին հաղորդումից ընդամենը տասը րոպե անց: Արմավիրի մարզի բնակիչ, 49-ամյա կասկածվողը Բաղրամյան պողոտայում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին: Հետագա միջոցառումներով ոստիկանները հայտնաբերեցին նաեւ գողոնը, որը վերադարձվել է տուժողին:

Դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Խոշոր չափերի չարաշահումներ են արձանագրվել

Սկիզբը՝ էջ 1

2014-2016 թթ. ընթացքում մի շարք տոների, նաեւ եղեռնի զոհերի հիշատակի օրվա եւ այլ միջոցառումների իրականացման համար վարչական շրջանի բյուջեից դուրս են գրվել ֆինանսական միջոցներ, որոնցով իրականացվել են հիշյալ միջոցառումները, այնուհետեւ Նոր Նորք վարչական շրջանի պաշտոնատար անձինք, ըստ ձեռք բերված նախնական տվյալների, օգտագործելով իրենց պաշտոնեական դիրքը՝ նախապես համաձայնության են եկել «Նոր Նորք» զարգացման հիմնադրամի տնօրինության հետ, եւ նույն միջոցառումները հիմնադրամի միջոցով կատարելու պատրվակով՝ հիմնադրամի դրամարկղից Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության եւ ծրագրերի բաժնի ու կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի պետերի անվամբ՝ 2014-2016 թթ. ընթացքում դուրս են գրվել գումարներ եւ կանխիկ փոխանցվել թաղապետարանի պաշտոնատար անձանց, որոնք յուրացրել են առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր մոտ 7 միլիոն դրամը: Այնուհետեւ կազմվել են դրամարկղի ելքի անդորրագրեր՝ իբր գումարները միջոցառումներն իրականացնելու համար են հանձնվել բաժնի պետերին:

Ավելին՝ «Նոր Նորք» զարգացման հիմնադրամի գործունեությունը 2016 թ. դեկտեմբերից դադարեցված լինելու պայմաններում՝ վարչական շրջանի որոշ պաշտոնյաներ վարչական շենքում տարածքներ վարձակալած անձանց չտեղեկացնելով այդ մասին, 2017 թ. հունվարից մինչեւ 2018 թ. մայիս ամիսը շարունակել են, արդեն կանխիկ եղանակով, գանձել գումարներ՝ այդ կերպ խարդախությամբ հափշտակելով մոտ 900 հազար դրամ:

Առերեւույթ հանցագործության դեպքերի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Տասնյակ քաղաքացիներ էին տուժել

Ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ մոտ երկու տասնյակ քաղաքացի խարդախության զոհ են դարձել: Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ բացահայտվեց խարդախության սխեմա, որը կազմակերպել եւ իրականացրել էին 22-23 տարեկան երիտասարդներ:

Սոցիալական կայքերում նրանք տեղադրել էին վարկային միջնորդություններ կազմակերպելու վերաբերյալ հայտարարություններ, որոնցում նշված հեռախոսահամարով զանգած քաղաքացիներին առաջարկել էին ավտովարկ ձեւակերպել: Քաղաքացիների վստահությունը չարաշահելով՝ նրանց անվամբ հաշվառել էին վաճառվող ավտոմեքենան, ապա այն գրավադրել վարկային կազմակերպությունում: Ստացված գումարը փոխանցել էին մեքենան վաճառողին, իսկ քաղաքացուն ծառայության դիմաց վճարել որոշակի գումար՝ վստահեցնելով, որ իրենք ժամանակին կմարեն վարկը: Սակայն երբ եկել էր վարկային պարտավորությունները կատարելու ժամանակը, այսպես ասած՝ «վարկային միջնորդները» չէին վճարել վարկային կազմակերպության սահմանած ամսավճարը՝ պարտավորությունը թողնելով քաղաքացուն: Խարդախությամբ գնված մեքենաները կա՛մ մասնատել ու վաճառել էին, կա՛մ նախապես հաստատված լիազորագրերով վաճառել արտերկրում:

Ոստիկանները հայտնաբերել եւ, խարդախություն կատարելու կասկածանքով, նախաքննական մարմին են ներկայացրել երեք հոգու:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Մարդու օրգանի ապօրինի վաճառք

Սկիզբը՝ էջ 1

Պարզվեց ներգրավված անձանց ինքնությունը: Միջոցառման այդ փուլում սերտ համագործակցություն ծավալվեց նաեւ Հայաստանում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի ծառայողների հետ, ինչի արդյունքում պարզվեց, որ քաղաքացիներից մեկն իրոք ստացել էր եվրոպական երկիր մուտք գործելու արտոնագիր եւ մեկնել: Այնտեղ վիրահատության միջոցով փոխպատվաստման էր վերցվել նրա երիկամը: Նշված հանգամանքը հաստատվեց նաեւ դատաբժշկական փորձաքննությամբ:

Հարուցվեց քրեական գործ՝ մարդու օրգանների (եւ) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառության հատկանիշներով: Քրեական գործի շրջանակներում անձը հրավիրվեց ոստիկանություն եւ ցուցմունք տվեց, որ, իրոք, երիկամի առուվաճառքի շուրջ խոսակցություններ է վարել այդ առաջարկով իրեն դիմած մարդու հետ: Նրա կազմակերպմամբ մի քանի անգամ մեկնել է Եվրոպա՝ բժշկական հետազոտություն անցնելու: Ըստ ցուցմունքի՝ հերթական անգամ այդպիսի բժշկական հետազոտություն կազմակերպելու նպատակով իրեն տեղափոխել են եվրոպական երկիր եւ այնտեղ, օգտվելով տվյալ երկրի լեզվին չտիրապետելու հանգամանքից, օգտագործելով նաեւ պարտքերի հետեւանքով առաջացած կախվածությունը, առանց նրա վերջնական համաձայնությունը ստանալու՝ նրան ենթարկել են վիրահատության եւ հանել երիկամը:

Ոստիկանության ձեռնարկած միջոցառումների արդյունքում այս հանցագործությանը ներգրավված գրեթե բոլոր անձանց ինքնությունը պարզվել է: Միջոցառումները շարունակվում են՝ հանցագործության հանգամանքներն ամբողջովին պարզելու ուղղությամբ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Համայնքի ղեկավարի ապօրինությունները



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունները ստուգելու նպատակով ծավալուն միջոցառումներ էին ձեռնարկվել: Պարզվել էր, որ Անի խոշորացված համայնքի ղեկավարը մի շարք ապօրինություններ է թույլ տվել:

Այս պահին հայտնի տվյալներով՝ համայնքապետարանի հավաքարարների աշխատավարձի բանկային քարտերը պահվել են աշխատակազմի ղեկավարի մոտ, որն ամեն ամիս կանխիկացրել ու հավաքարարներին առձեռն վճարել է 35 հազար դրամ, իսկ գումարի մյուս մասը՝ 40 հազար դրամը, փոխանցել է համայնքի ղեկավարին: 2018 թվականի ընթացքում բանկային քարտեր են տրամադրել հավաքարարներին՝ հայտնելով՝ իբր աշխատավարձը բարձրացել է:

Պարզվել է նաեւ, որ համայնքի ղեկավարն իր հարազատին հրամանագրել է փոխքաղաքապետի պաշտոնում: Նա աշխատանքի չի ներկայացել, գտնվել է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ աշխատավարձը յուրացման կամ վատնման եղանակով հափշտակվել է:

Պարզվել է, որ համայնքի ղեկավարն ամբողջովին քանդել է Մարալիկ քաղաքում կառուցվող դպրոցն ու շինանյութը վաճառել մի գյումրեցու: Նա համայնքի գերեզմանատունը ցանկապատելու պատրվակով համայնքապետարանի բյուջեից դուրս է գրել 3 միլիոն դրամ, սակայն ցանկապատը չի կառուցվել, իսկ փողը յուրացվել է: Բացի այդ, համայնքի ղեկավարը ՌԴ մի քաղաքացու, որպես սոցիալապես անապահով ընտանիքի, հատկացրել է բնակարան: Քաղաքացին տունը վաճառել է՝ փողը փոխանցել համայնքապետին: Յուրացրել է նաեւ 2014-2017 թթ. ընթացքում համայնքի բյուջեից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես օգնություն դուրս գրված գումարները, իսկ 2012 թ. ապամոնտաժել եւ վաճառել է համայնքի տարածքի 30 սմ տրամագծով, 280 մետր երկարությամբ ոռոգման երկաթյա խողովակներն ու գումարը յուրացրել:

Հարուցվել է քրեական գործ:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Ավազակային հարձակման դեպք բացահայտվեց

Օգոստոսի 28-ի գիշերը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից ոստիկանության Կենտրոնական բաժին ահազանգեցին, որ գանգուղեղային տրավմա եւ գլխուղեղի ցնցում ախտորոշմամբ հիվանդանոց է տեղափոխվել 26-ամյա մի երիտասարդ: Նրա հայտնածով՝ Երեւանի քաղաքապետարանի մոտ անծանոթ մարդիկ ծեծել են իրեն: Նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն: Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները ձեռնարկեցին տարաբնույթ օպերատիվ միջոցառումներ՝ պարզելով դեպքի իրական հանգամանքները: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ երիտասարդը ենթարկվել էր ավազակային հարձակման: Շուտով պարզվեց հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը. Հրազդանի 33-ամյա բնակիչը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին: Հարուցված քրեական գործի քննությունը շարունակվում է:

Կոտրել էր տղամարդու ծնոտը

Մայիսի 30-ին «Արմենիա» բժշկական կենտրոնում հոսպիտալացվել էր 66-ամյա մի տղամարդ; Ախտորոշվել էր ծնոտի կոտրվածք: Դեպքի առթիվ քրեական գործ էր հարուցվել՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում քրեական հետախույզները պարզել էին, որ տղամարդը վնասվածքը ստացել է Մեծամորի Այգեգործական թաղամասում: Վիճաբանության ժամանակ անծանոթ մեկը բռունցքով խփել էր դեմքին:

Հանցագործության բացահայտման ուղղությամբ Մեծամորի ոստիկանների ձեռնարկած միջոցառումները հոկտեմբերի 2-ին արդյունք տվեցին: Ստացված տեղեկությունների համաձայն՝ տղամարդուն մարմնական վնասվածքը պատճառել էր Մեծամորի 55-ամյա մի բնակիչ: Նա հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն, ապա ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին ու ձերբակալվեց:

Նախաքննությունը շարունակվում է:

Դանակահարություն Գառնու ձորում

Օգոստոսի 15-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանության Էրեբունու բաժին հաղորդեցին, որ դանակահարված հիսունհինգամյա մի տղամարդ է հոսպիտալացվել: Առողջությանը պատճառված ծանր մարմնական վնասվածքի փաստով քրեական գործ հարուցվեց: Էրեբունու ոստիկանները պարզեցին, որ տղամարդը վնասվածքը ստացել է Գառնու ձորում եւ դեպքի հանգամանքների պարզման պարտականությունը տարածքային կարգով հանձնարարվեց ոստիկանության Կոտայքի բաժնին: Հետախուզական միջոցառումներին միացան ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի ծառայողները, որոնք էլ բացահայտեցին հանցագործությունը: Հոկտեմբերի 2-ին Հրազդանում հայտնաբերվեց ու կասկածանքով բերման ենթարկվեց երեսունչորսամյա մի կին: Նա ներկայացվել է Աբովյանի քննչական բաժին ու տվել խոստովանական ցուցմունք: Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

www.police.am

Գողը մտերիմներից էր

Հոկտեմբերի 4-ին Ստեփանավանում բնակվող թոշակառու մի կին հաղորդում էր տվել, որ նախորդ օրը ներքնակի տակից հափշտակել են պայուսակը, որի մեջ եղել է փող:

Ստեփանավանի քրեական հետախույզները պարզել են, որ գողությունը հնարավոր է կատարած լինի տուժողի ծանոթուհին:

Նա հրավիրվել է բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Խաբեությամբ համակարգիչ էր հափշտակել

Հոկտեմբերի 4-ին Հրաչյա Քոչարի փողոցի մի բնակիչ ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում էր տվել, որ սեպտեմբերի 5-ին Նոր Արեշի 44-ամյա մի բանկչուհի, հետագայում վճարելու պայմանով, իրենից վերցրել է 500 հազար դրամ արժողության դյուրակիր համակարգիչ, բայց այդպես էլ չի վճարել:

Կասկածվողը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Հոկտեմբերի 4-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում Շիրակի մարզի Անի գյուղի մի բնակչուհի հաղորդում էր տվել, որ երթուղային ավտոբուսում պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ 30 հազար դրամ եւ բանկային քարտեր էին:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ 6-րդ բաժանմունքի ծառայողները, օպերատիվ տվյալները իրացնելով, Բաղրամյան պողոտայից կասկածանքով ոստիկանության Արաբկիրի բաժին բերման են ենթարկել Արմավիրի մարզի Արեւաշատ գյուղի 49-ամյա մի բնակչի: Նա ներկայացրել է գողոնը, տվել խոստովանական բացատրություն, որ հոկտեմբերի 2-ին 8-րդ համարի երթուղային ավտոբուսում եւս մեկ ուղեւորուհու դրամապանակ է հափշտակել:

Նախապատրաստվում են նյութեր:

Թմրամիջոցներ օտարերկրացու մոտ

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, սեպտեմբերի լույս 30-ի գիշերը, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման են ենթարկել 35-ամյա օտարերկրյա քաղաքացու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին մետամֆետամին, սփայս եւ այլ թմրամիջոցների նմանվող զանգվածներ, որոնք ուղարկվեցին փորձաքննության: Համաձայն փորձաքննության եզրակացության՝ հայտնաբերվածները թմրամիջոց են:

Կատարվում է հետաքննություն:

Հափշտակեց, վթարի ենթարկվեց ու հայտնաբերվեց

Հոկտեմբերի 3-ի գիշերը ոստիկանության Կումայրու բաժնում հաղորդում ստացվեց, որ մի տղամարդ, տաքսու վարորդի վստահությունը չարաշահելով, վերցրել է «Ռենո Լոգան» մակնիշի ավտոմեքենան ու հեռացել:

Ոստիկանության Ամասիայի բաժնի ծառայողները Շիրակի մարզի Բերդաշեն գյուղում հայտնաբերեցին ե՛ւ մեքենան, ե՛ւ այն հափշտակած տղամարդուն, որը բերման ենթարկվեց ոստիկանության Ամասիայի բաժին:

Բաժնում պարզվեց, որ նախքան հայտնաբերումը տղամարդը մեքենայով վթարի է ենթարկվել:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

IV այրգախների դանդում

Գյումրի քաղաքի բնակչուհի Մարինա Լյուբովան 2018-ի գարնանը ծանոթացավ Կարբի գյուղի բնակիչ Վարուժան Մխիթարյան հետ, որը Գյումրիում գազիֆիկացման աշխատանքներ էր կատարում եւ ապրում էր այն հյուրանոցային համալիրում, որտեղ Մարինան ադմինիստրատոր էր: Շուտով մտերմացան: Վարուժանը Մարինային ամուսնության առաջարկ արեց: Մարինան վստահեց նրան:

Մարինայի վստահությունը նվաճելուն պես Վարուժանը պարտքով 740 հազար դրամ խնդրեց ու չմերժվեց: Այնուհետեւ եւս 85 հազար դրամ խնդրեց՝ խոստանալով կարճ ժամանակում վերադարձնել պարտքը, սակայն տարբեր պատճառաբանություններով ձգձգում էր: Վարուժանի պահվածքը զայրացնում էր Մարինային, բայց համբերատար լռում էր, քանզի նրա հետ ընտանիք կազմելու հույս ուներ: Հետո Մարինան պարզեց, որ Վարուժանը ամուսնացած է ու երկու երեխա ունի:

Այդ օրվանից Մարինան մշտապես Վարուժանից պահանջում էր 825 հազար դրամը, բայց՝ ապարդյուն: Ստիպված դիմեց իրավապահներին:

Ոստիկանության Կումայրիի բաժնում կատարվածի վերաբերյալ նախապատրաստվեցին նյութեր: Չեռնարկված միջոցառումների արդյունքում Վարուժան Մխիթարյանը հայտնաբերվեց: Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցարարք:

Գյումրիաբնակ Անահիտ Հարությունյանը եւս վստահելու հետեւանքով հայտնվեց տուժողի կարգավիճակում: Պլանշետը վաճառելու մտադրություն ուներ: Գնորդ գտնելու նպատակով սոցիալական կայքերից մեկում հայտարարություն տեղադրեց: Օրեր անց Երեւանից նրան զանգեց Վարդուհի Մանուկյանը եւ պլանշետը գնելու ցանկություն հայտնեց: Վարդուհին կանխիկ գումար չուներ, բայց այդ մասին հեռախոսազրույցի ժամանակ չտեղեկացրեց:

Օգոստոսի 15-ին Վարդուհին Գյումրիում հանդիպեց Անահիտին: Գնորդը ջանք ու եռանդ չխնայեց նրա վստահությունը շահելու համար: Դրանից հետո միայն անկեղծացավ, որ կանխիկ փող չունի. գումարը տասը օրից տալու պայմանով կարող էր պլանշետը գնել: Անահիտը վստահեց Վարդուհուն: Սակայն վերջինս խոստումը չկատարեց: Հետն էլ խուսափեց Անահիտի զանգերին պատասխանելուց: Ու միայն հետո պիտի պարզվեր, որ պլանշետը Վարդուհին վաճառել էր մեկ ուրիշի, իսկ եկամուտը ծախսել էր անձնական կարիքների վրա:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները: Չեռնարկված միջոցառումների արդյունքում Վարդուհին հայտնաբերվեց եւ կատարվածի վերաբերյալ բացատրություն տվեց:

Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք:

Երկու դեպքով էլ կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Զվարճալի ամփոփագիր

Անասնախարդախություն

Գիշերվա երկուսին ոստիկանություն է զանգել Լոռու մարզի գյուղերից մեկի 22-ամյա բնակիչը եւ հայտնել, որ իրենց գյուղում գնորդի բեռնատարն են բարձել իր անասունները, բերել Արարատի մարզ, որտեղ գնորդը խոստացել է մեկուկես միլիոնը վճարել Երեւանում եւ... հեռացել է:

Մեկնած ոստիկաններին երիտասարդը նաեւ հաղորդում է տվել, որ իր հինգ խոշոր եղջերավոր անասունները տեղափոխել են մի գյուղի սկզբնամասում գտնվող գոմ, հետո գնորդի հետ գնացել է Երեւան՝ իբր փողը ստանալու, սակայն իրեն մոլորեցնելով՝ գնորդը դիմել է փախուստի:

Չեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է գնորդի ինքնությունը: Չեռնարկվում են միջոցառումներ Վանաձորի բնակիչ, 27-ամյա «գնորդին» եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Բարդիները խշշացին...

Ոստիկանություն զանգած 54-ամյա կինը հայտնում էր, որ դաշտից գողացել են իրենց բարդիները:

Պարզվել է, որ մոտ երկուսուկես մետր երկարությամբ բարդու երեք գերան կտրատել եւ որպես վառելափայտ տարել ու իրենց տան խորդանոցում դասավորել են ահազանգող կնոջ որդիները, ինչի մասին, սակայն, ընտանիքի մյուս անդամները տեղյակ չեն եղել:

Կնանիք

Օրը ցերեկով ոստիկանություն է զանգել 56-ամյա Անահիտը եւ հայտնել, որ նշված հասցե ոստիկան մոտենա:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ վիճաբանության ժամանակ Անահիտն ու հարեւանուհին՝ 60-ամյա Քնարիկը, ձեռքերով խփել են իրար՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Ավելի ուշ «շտապօգնության» ենթակայանից հաղորդում է ստացվել, որ հիպերտոնիկ կրիզ, վերջույթի քերծվածքով բուժօգնություն են ցուցաբերել Քնարիկին, որը հայտնել է, որ իրեն խփել է Անահիտը:

Հարեւանուհիները հրաժարվել են հաղորդում տալուց:

Հինգհազարանոց կռիվ

Ոստիկանություն է զանգել մի անհայտ քաղաքացի եւ հայտնել, թե՝ գյուղի մի տուն շտապ ոստիկան ուղարկեք, կռիվ է:

Շտապ մեկնել է օպերատիվ խումբը: 72-ամյա կինը հաղորդում է տվել, որ 26-ամյա հարսը վերջին շաբաթվա ընթացքում իրենց տան նախասրահից գողացել է հինգ հազար դրամ, որն էլ պատճառ է հանդիսացել երկարատեւ վիճաբանության:

Սկեսուրը նաեւ բացատրել է, թե ինչու նախկինում ոստիկանություն չի դիմել. ամաչել է եւ մտածել, որ հարցը կկարգավորվի:

Ավետիսի գույժը

Ահազանգ է ստացվել, որ տուն-ինտերնատում երկու հոգի վիճաբանել են, նրանցից մեկը ստացել է վնասվածք:

Քիչ անց հաղորդում է ստացվել նաեւ հիվանդանոցից. բաց գանգուղեղային տրավմայով ինտերնատից բուժօգնության է տեղափոխվել 53-ամյա Ավետիսը:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ վիճաբանության ժամանակ 80-ամյա Ռոբերտն է ձեռնափայտով խփել Ավետիսի գլխին՝ պատճառելով վնասվածք:

Ռոբերտը խոստովանել է, Ավետիսը՝ հրաժարվել հաղորդում տալուց:

Ոստիկանության պատմությունից

Ներկայիս ոստիկանական գործառույթների զգալի մասը իրականացվել է դեռեւս Հին Հռոմում, օրինակ՝ Պրետորական գվարդիան: Հռոմեական կայսրությունը օրինականության հաստատման հարցում մեծ հաջողությունների էր հասել: Հինգերորդ դարի սկզբներին ոստիկանական գործառույթներ իրականացնում էին տեղի իշխաններն ու մեծահարուստները: Միջին դարերում, մասնավորապես՝ Անգլիայում, ոստիկանական պարտականությունները կատարում էին տեղի ազնվականները կամ նրանց անձնական պահակախմբերը: Նրանցից յուրաքանչյուրը իր տարածքում կարգ ու կանոն հաստատելու համար չինովնիկ կոնստեբլի դեր էր կատարում: Դա բացատրվում էր ֆեոդալական կարգերով, երբ շարքային մահկանացուն իր կյանքի պաշտպանությունն ու իրավունքը փնտրում էր տիրոջ մոտ:

Կոնստեբլի իրավունքներից էր հանցագործների ձերբակալումն ու նրանց ազատազրկելը: Տեւական ժամանակ կոնստեբլի պաշտոնը հասարակական հիմունքներով էր եւ չէր վարձատրվում: 16-րդ դարի կեսերին, հարուստները սկսեցին մարդկանց վարձել, որպեսզի իրենց փոխարեն կատարեն այդ գործառույթները: Սա կարելի է համարել ոստիկանության համակարգի ձեւավորման սկիզբը:

16-րդ դարում Ֆրանսիայում Լյուդովիկոս 14-րդը ստեղծեց 40 տեսուչներից բաղկացած մասնագիտացված մի խումբ, որի անդամները վճարովի լրտուների միջոցով տեղեկություններ էին հավաքում քաղաքացիների վարքի մասին եւ այդ տեղեկատվությունը փոխանցում իշխանություններին: Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո ստեղծվեցին ոստիկանական երկու առանձին կառույցներ, որոնցից մեկը զբաղվում էր ընդհանուր խնդիրներով, մյուսը՝ քաղաքական հանցագործություններով:

Բրիտանիայում, հատկապես՝ Լոնդոնում, օրինականությունն ապահովելու առավել արդյունավետ միջոցներ եւ ուժեր ունենալու ցանկությամբ անհրաժեշտություն առաջացավ ստեղծել հատուկ կազմակերպված մարմին, եւ Պառլամենտի բազմաթիվ քննարկումներից հետո Ռոբերտ Փիլը 1829 թվականին հիմնեց Լոնդոնի մետրոպոլիային ոստիկանությունը, որը դարձավ ժամանակակից ոստիկանության նախատիպը: Այսինքն՝ առաջին ոստիկանական կառույցը հիմնադրվել է Բրիտանիայում:

Առաջին անգամ «ոստիկանություն» տերմինն օգտագործել է Մելխիոր Ֆոն Օսսան՝ 1542-1545 թվականներին, երբ Սաքսոնիայի կյուրֆյուրստության կանցլեր էր: Եվ Մելխիոր Ֆոն Օսսայի, եւ Նիկոլյա դը Լամարի համար, որը 1750 թվականին հրատարակեց «Տրակտատ ոստիկանության մասին» աշխատությունը, ոստիկանություն բառը ուներ «հասարակական կարգուկանոն» նշանակությունը:

Բրիտանական ոստիկանության զարգացումը խիստ կարեւոր էր, քանզի այն դարձավ ոչ միայն ԱՄՆ-ի, այլեւ զարգացած արդյունաբերական գրեթե բոլոր երկրների ոստիկանության նախատիպը: Մետրոպոլիային ոստիկանության գործունեության հիմնական հայեցակարգը հանցավորության հսկողությունն ու նախականխումն էր: Բացի այդ, մեծ ուշադրություն էր դարձվում նաեւ բնակչության եւ ժողովրդական դատարանի հետ համագործակցությանը:

Մի քանի տարի անց ստեղծվեց Թագավորական Իռլանդիայի ոստիկանական կառույցը, իսկ ավելի ուշ՝ համանման կառույցներ սկսեցին գործել Կանադայում, Հնդկաստանում եւ Ավստրալիայում: ԱՄՆ-ում առաջին մշտական ոստիկանական դեպարտամենտը հիմնվել է 1845 թվականին՝ Նյու Յորքում, իսկ ավելի ուշ՝ նաեւ Բոսթոնում: Այս դեպարտամենտները լիովին ենթարկվում էին պետությանը, եւ դրանց գործունեությունը հստակ վերահսկվում էր: Ներկայումս Կանադայի տարածքում գործում է 800 ոստիկանական կազմավորում, որոնք գործառույթներով բավական նման են Բրիտանիայի ոստիկանությանը:

Ֆրանսիայի ոստիկանությունը բաղկացած է պետական իրավապահ երկու կազմակերպություններից. Ազգային ժանդարմերիան, որի լիազորությունները տարածվում են ոչ մեծ բնակավայրերի վրա, եւ Ազգային ոստիկանությունը, որը գործում է Փարիզում ու հարակից բնակավայրերում:

Երկրորդ աշխարհամարտից հետո դաշնակիցները Արեւմտյան Գերմանիայում կիրառեցին ոստիկանության անգլո-ամերիկյան համակարգը, որը ապակենտրոնացված էր: Հիմնական նպատակը կառույցը հնարավորինս ապառազմականացնելն էր: Փորձը ցույց տվեց, որ դա ոսկե միջինն է, եւ պայմանավորված էր ժամանակի ու իրավիճակի թելադրանքով:

Գերմանիայում ոստիկանության հետ մեկտեղ գործում է քննությունների պետական ծառայությունը (Bundeskriminalamt), որը հայտնի է տեղեկատվական հսկա բազայով եւ առաջատար տեխնոլոգիաների կիրառմամբ:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 3-ից 10-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 29 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 8-ը՝ գողության, 2-ը՝ գողության փորձի, 5-ը՝ խարդախության, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու,1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 2 հետախուզվող:

Արձանագրվել է 110 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 166-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 35 դեպք. 4 մարդ զոհվել է, 36-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հոկտեմբերի 3-ին Երեւանի «Նոր Խարբերդ» այգեգործական ընկերությունում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի, ապա «Օպել»-ի վարորդը վրաերթի է ենթարկել 35 եւ 20-ամյա քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 3-ին Երեւանի Վաղարշյան փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 39-ամյա քաղաքացու եւ 10-ամյա տղայի, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 70-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Արմավիրի մարզի Մերձավան գյուղում «ԿՈԱԶ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Գյումրի քաղաքի Շիրակացու եւ Դուդկոյի փողոցների խաչմերուկում «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 64 եւ 28-ամյա քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 196-րդ կմ-ին՝ Անգեղակոթ գյուղի խաչմերուկի մոտ, «ՎԱԶ-21144» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 48-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 122,9-րդ կմ-ին «Լադա Պրիորա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 8-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 4-ին Սոթք-Վարդենիս ճանապարհին՝ Սոթք գյուղի կենտրոնական խճուղում, «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել մի տղամարդու, որը տեղում մահացել է:

■

Հոկտեմբերի 5-ին Երեւանի Բրազիլիայի հրապարակում «Մազդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 85-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 5-ին Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի եւ Մռավյան փողոցների խաչմերուկում «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 16-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 5-ին Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղում «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 82-ամյա մի քաղաքացու, որը հիվանդանոցում մահացել է:

■

Հոկտեմբերի 6-ին Երեւանի Գարեգին Նժդեհի փողոցում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 22-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 6-ին Եղեգնուտ-Երասխահուն ճանապարհի 1-ին կմ-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 35-ամյա վարորդը մահացել է:

■

Հոկտեմբերի 6-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 34-ամյա քաղաքացուհու, որը տեղում մահացել է:

■

Հոկտեմբերի 8-ին Երեւանի Հերացու փողոցում իրար են բախվել «Օպել», «Տոյոտա», երկու «Մերսեդես» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 25-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 8-ին Երեւանի Գ. Նժդեհի եւ Սեւանի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆորդ»-ի 30-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները, «ԲՄՎ»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մշտական մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության հետեվյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Ճանապարհային ոստիկանության ֆինանսական բաժանմունքի (այսուհետ՝ Բաժանմունք) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-482):

Իրականացնում է Բաժանմունքի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար: Բաժանմունքի պետի հանձնարարությամբ իրականացնում է Բաժանմունքի գործունեության կոնկրետ ոլորտի հաշվառման հետ կապված աշխատանքները, իրականացնում է աշխատավարձերի համակարգչային ծրագրերի մուտքագրում, փոփոխությունների գրանցում, անձնական քարտերի ընդհանուր հաշվառում, մասնակցում է Բաժանմունքի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 13.11.2019 թ. ժամը 10.00-ին ՀՀ ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

2. Երեւան քաղաքի վարչության էրեբունու բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-503)

Իրականացնում է Բաժնի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար: Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է ոստիկանության գործունեության կոնկրետ ոլորտի հաշվառման հետ կապված աշխատանքները, իրականացնում է աշխատավարձերի համակարգչային ծրագրերի մուտքագրում, փոփոխությունների գրանցում, անձնական քարտերի ընդհանուր հաշվառում: Բաժնի պետի հանձնարարությամբ՝ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 14.11.2019 թ. ժամը 10.00-ին՝ ՀՀ ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

3. Անձնագրային եւ վիզաների վարչության եղեգնաձորի անձնագրային բաժանմունքի (այսուհետ՝ Բաժանմունք) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-429):

Բաժանմունքի պետի ցուցումով իրականացնում է ընտրացուցակների ճշգրտման, տպագրման աշխատանքներ, իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելու ուղղությամբ, կատարում է ՀՀ քաղաքացու անձնագիր, նույնականացման քարտ տալու (փոխանակելու), անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու, անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության, բնակչի հաշվառման, հաշվառումից հանելու համար պահանջվող ստուգումներ եւ նշումներ, կատարում է նույնականացման քարտերի, անձնագրերի, փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդային փաստաթղթերի հանձնում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, անձանց տրամադրում է անհատական հաշվառման տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 15.11.2019 թ. ժամը 10.00-ին՝ ՀՀ ոստիկանության շենքում՝ ք.Երեւան, Նալբանդյան 130:

4. Անձնագրային եւ վիզաների վարչության Ստեփանավանի անձնագրային խմբի (այսուհետ՝ Խումբ) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-447):

Խմբի ղեկավարի ցուցումով իրականացնում է ընտրացուցակների ճշգրտման, տպագրման աշխատանքներ, իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելու ուղղությամբ, կատարում է ՀՀ քաղաքացու անձնագիր, նույնականացման քարտ տալու (փոխանակելու), անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու, անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության, բնակչի հաշվառման, հաշվառումից հանելու համար պահանջվող ստուգումներ եւ նշումներ, կատարում է նույնականացման քարտերի, անձնագրերի, փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդային փաստաթղթերի հանձնում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, անձանց տրամադրում է անհատական հաշվառման տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 15.11.2019 թ. ժամը 11.00-ին՝ ՀՀ ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- տվյալ պաշտոնի անձնագրում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես եւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- տիրապետում է (կարդում եւ կարող է բացատրվել) ռուսերեն լեզվին:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (տրվում է Հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմորդը),
- քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ,
- տեղեկանք այն մասին, որ իր մոտ առկա չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես եւ ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 98-Ն որոշմամբ հաստատված հավելվածում ընդգրկված հիվանդություններից որեւէ մեկը,
- հայտարարություն այն մասին, որ ապագա աշխատանքը կապված չէ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) քաղաքացիական ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ,
- հայտարարություն՝ տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին,
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է,
- արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- 2 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 30.10.2019 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչության քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին՝ 306 կամ 313 սենյակ:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 0025, Նալբանդյան 130:

Հեռ.՝ (011) 52-83-74 (ներքին՝ 54-46), (010) 59-66-85 (ներքին՝ 56-85), (010) 59-64-56 (ներքին՝ 54-56):

Հակակոռուպցիոն մեխանիզմներ

Սկիզբը՝ նախորդ համարում

Ֆրանսիայում տասնամյակներ առաջ կոռուպցիոն ռիսկեր կային այն բնագավառներում, որտեղ պետական մարմինները պայմանագրային հիմունքներով մասնավոր ընկերությունների հետ համատեղ ծրագրեր էին իրականացնում: 1993 թվականին ընդունված Սապենի օրենքը նախատեսում է, որ նման ծրագրերի քննարկմանը եւ հաստատմանը պարտադիր պետք է ներգրավված լինեն ընդդիմության եւ մրցակցության ու սպառման հարցերով գլխավոր տնօրինության ներկայացուցիչները:

1995 թվականին Բեռլինի Սենատը որոշում կայացրեց ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի միջգերատեսչական աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկվեցին համապատասխան փորձագետներ Բեռլինի բոլոր գերատեսչություններից եւ կազմակերպություններից:

Աշխատանքային խմբի հիմնական նպատակն էր՝ բացահայտել հնարավոր բոլոր «տարածքները», որտեղ «բարենպաստ պայմաններ» կային կոռուպցիայի համար, հստակեցնել այդ երեւույթի դեմ պայքարի ուղղությունները, տարբեր աղբյուրներից կոռուպցիայի վերաբերյալ ստացվող տեղեկատվության կուտակումը եւ համակարգումը: Խումբը պատրաստում եւ հրատարակում է այս երեւույթի դեմ պայքարին վերաբերող մեթոդական խորհրդատվություններ: Բացի այդ, խմբի հիմնական խնդիրն էր կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի Կենտրոնական վարչության ստեղծումը: Այս կառույցի գերնպատակն էր՝ յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն ընձեռել կոռուպցիայի ցանկացած դրսեւորման ու փաստի վերաբերյալ հաղորդում ներկայացնել Կենտրոնական վարչություն եւ միաժամանակ տեղեկատվություն ստանալ, թե ինչ քայլեր կարելի է ձեռնարկել:

Իտալիայի օրենսդրությունը նույն պատասխանատվությունն է նախատեսում թե՛ կաշառակերի, թե՛ կաշառատուի համար: Բայց եթե մասնավոր անձը «շնորհակալություն է հայտնում» արդեն իսկ իրականացված գործողության համար, ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Իտալիայում ժամանակ առ ժամանակ «Մաքուր ձեռքեր» միջոցառումներ են անցկացվում, որոնց շրջանակներում պատասխանատվության են ենթարկվում բազմաթիվ պետծառայողներ: Իտալացի իրավապահները նշում են, որ այդ միջոցառումների արդյունքում փոխվել է նաեւ նրանց վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ: Ներկայումս նրանց մեծամասնությունը խիստ բացասաբար է վերաբերվում այդ կարգի երեւույթներին, այնինչ ոչ վաղ անցյալում այդպիսիք դիտվում էին որպես «բնական երեւույթներ»:

ԱՄՆ-ում ժամանակի ընթացքում ձեւավորվել են պետպաշտոնյաների աշխատանքային էթիկայի նորմեր եւ իրավական որոշակի սահմանափակումներ, որոնք այսօր արդեն պարտադիր են ցանկացած պետծառայողի համար: Ներկայումս պետական պաշտոնյաների եւ ծառայողների գործունեությունը կարգավորվում է բարոյական կանոնագրքերով եւ օրենսդրական կանոնակարգերով:

Կառավարական ծառայողների էթիկայի հիմնական սկզբունքները նշված են ԱՄՆ նախագահի հատուկ հրամանագրի 14 կետերում: Այդ դրույթներից շատերը ամրագրվել են 1992 թվականին ընդունված պետական ծառայության էթիկայի հարցերով կառավարման օրենքով:

Նախագահական հրամանագրով սահմանվում են պետական ծառայողների արտոնությունները, ծառայությունից հեռանալու կարգը: Պաշտոնյաներին արգելվում է ծառայողական դիրքն օգտագործել սեփական շահերի համար, իրենց պաշտոնեական պարտականություններին հակասող գործողությունների արդյունքում ֆինանսական հետաքրքրություններ ունենալ, ներքին օգտագործման տեղեկատվությունն օգտագործել անձնական շահերի համար, նվերներ ընդունել: Մյուս դրույթները կարգավորում են ծառայողական պարտականությունները կատարելու կարգը: Կաշառքտալը եւ վերցնելը դիտվում են որպես քրեորեն պատժելի արարքներ:

Ընդունվել է նաեւ պետական ապարատի աշխատակիցների համար նախատեսված կանոնակարգ, որի համաձայն՝ ծառայողին թույլատրվում է անծանոթներից ստանալ 25 դոլարը չգերազանցող արժեքով նվերներ, իսկ ենթականերից որեւէ նվեր ստանալը խստորեն արգելվում է:

Պետական մարմինների եւ մասնավոր ընկերությունների փոխհարաբերությունները վերահսկելու համար ԱՄՆ-ում կարգ է գործում, որի համաձայն՝ սխալ կնքված պետական պայմանագրերի մասին հաղորդում տրամադրող աշխատակիցը դրամական պարգեւատրում է ստանում:

Ինչպես են վարժեցնում ծառայողական շներին

Ծառայողական գործի համար լավագույնը որոշ ցեղատեսակի շներն են՝ հովվաշները, ռոթվեյլերները. էդելտերիերները եւ, տարօրինակ է, նաեւ՝ սպանիելները: Երբեմն գնում են նորածին շների եւ սկսում վարժեցնել: Նախ սովորական հրամանները կատարելուն են վարժեցնում, իսկ ավելի լուրջ վարժեցումը սկսվում է մեկ տարեկանից: Ծառայության համար ընտրված շները պետք է լինեն առողջ, ուժեղ եւ դիմացկուն, պետք է ունենան լավ ախորժակ, հոտառություն, կատաղություն եւ ակտիվություն: Նրանք չպետք է վախենան մարդուց եւ, ամենակարեւորը՝ չպետք է «հետապնդեն» իրենց պոչին: Կան շներ, որոնք անընդհատ փորձում են բռնել իրենց պոչը:

Որոնող շներին վարժեցնում են առանձնահատուկ. սովորեցնում են վերցնել հետքը, ընտելացնում են կրակահերթերին, կրակոցներին, որ գործի ժամանակ չվախենան:

Բայց, իհարկե, վարժեցման հիմնական հիմքը սերն է, ջերմությունը, այլապես շունը չի կայանա որպես պրոֆեսիոնալ:

Յուրաքանչյուր կինոլոգ աշխատում է մեկ շան հետ եւ նրա հետ էլ գնում է դեպքի վայր: Շունը վստահում է միայն իրեն վարժեցնողին, հավատում է նրան: Հենց այդ կինոլոգին է համարում իր տերը: Աշխատանքի մեջ շան եւ տիրոջ փոխադարձ նվիրվածությունը շատ կարեւոր է:

Կինոլոգներն իրենց շներին անվանում են անվախ, քաջ, լավագույն ականազերծող, հավատարիմ, վստահելի ու նվիրված գործընկեր:

Ծառայողական շները պահանջված են եւ՛ ոստիկանությունում, եւ՛ Զինված ուժերում, եւ՛ արտակարգ իրավիճակներում:

Վաղուց են շները պահպանում մարդուն, նրա բնակավայրը, անասունների հոտը: Էլ չենք խոսում փրկարար շների մասին, որոնք աշխատում են ջրում, ցամաքում, սարերում:

Ըստ կինոլոգների՝ տարբեր ցեղատեսակի շներ նախատեսված են տարբեր ծառայությունների համար: Օրինակ՝ գերմանական, արեւելաեվրոպական, միջինասիական եւ կովկասյան հովվաշները, ռոթվեյլերները, սետերները պարզապես անգնահատելի են պահակային եւ որոնողական աշխատանքներում:

Որոնողափրկարարական աշխատանքներում, աղետների, երկրաշարժերի, ձնահյուսքի ժամանակ օգտագործում են այն շներին, որոնք օժտված են առանձնահատուկ հոտառությամբ, դիմացկուն են, ուժեղ եւ շարժուն: Այս դեպքում անգնահատելի են սենբեռնարները, լաբրադորները, նյուֆաունդլենդները, գերմանական հովվաշները:

Կան նաեւ լծկան շներ, որոնք խիստ տարբերվում են իրենց ֆիզիկական կառուցվածքով, հանգիստ բնավորությամբ եւ հրաշալի կողմնորոշմամբ:

Հովվաշներն անփոխարինելի են հոտը հսկելու, կառավարելու, կորած կենդանիներին գտնելու գործում:

Անասնապահական վայրերում շատ են նաեւ գիշատիչները: Այդ տեղերում ծառայություն են անցկացնում կովկասյան, միջինասիական, հարավռուսական հովվաշները: Գայլերի նկատմամբ ատելությունն այս շների մոտ ի ծնե է, ինչպես եւ կատաղությունն ու զոհին բռնել-բաց չթողնելը:

Շունն այն կենդանին է, որին մարդն առաջինն է վարժեցրել: Հնագույն ժամանակներից նա եղել է մարդու անփոխարինելի ուղեկիցը:

Դարեր շարունակ մարդն օգտագործել եւ շարունակում է օգտագործել շների նվիրվածությունը, հավատարմությունը եւ կյանքի տարբեր եւ բնագավառներում բնությամբ նրան տրված այլ որակներն ու հատկանիշները:

www.police.am

Բացահայտվեց ժամեր անց

Հոկտեմբերի 4-ին ոստիկանություն զանգած Քարակերտի բնակչուհին հայտնում էր, որ իր տնից կատարվել է գողություն:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ ընտանիքի բարեկամները, օգտվելով տան 2-րդ հարկի դռան բաց լինելու հանգամանքից, զգեստապահարանին դրված ճամպրուկը դանակով պատռելու եղանակով, գողացել են դրամ եւ դոլար:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նրանք բերման են ենթարկվել ոստիկանության Բաղրամյանի բաժին, որտեղ նրանցից մեկի անձնական խուզարկությամբ հագուստի գրպաններից եւ գուլպայի միջից հայտնաբերվել է 860 հազար դրամ:

Նա խոստովանել է, որ գողությունը կատարել է ինքը, եւ հայտնաբերվածը գողացվածի մի մասն է, մյուս մասը տվել է իր եղբորը՝ անձնական կարիքները հոգալու համար:

Կատարվում է նախաքննություն:

Կասկածյալը բերման ենթարկվեց

Հոկտեմբերի 4-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները Մառի փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, բաժին բերման են ենթարկել 17-ամյա մի պատանու: Նա խոստովանել է, որ հոկտեմբերի 2-ին Լվովյան փողոցում կայանված «ՎԱԶ-2105» մեքենայից գողացել է մարտկոցը:

Պարզվել է նաեւ, որ նա օգոստոսին Մոլդովական փողոցում կայանված «Օպել»-ից եւս գողացել է էլեկտրական մարտկոցը: Սեպտեմբերին Հյուսիսային պողոտայում, համացանց մուտք գործելու նպատակով, ոմն Վահեից խնդրել է նրա բջջային հեռախոսը եւ հեռացել:

Նախապատրաստվում են նյութեր:

Մեքենաների հրկիզում Հալաբյան փողոցում

Հոկտեմբերի 2-ի գիշերը ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Հալաբյան փողոցի շենքերից մոտ մեքենա է այրվում:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խմբի ծառայողները պարզել էին, ժամը 1-ին, անհայտ անձը դիտավորությամբ հրկիզել է «Ֆոլքսվագեն» եւ «Հունդաի» մեքենաները:

Հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում, հոկտեմբերի 4-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները Արարատի մարզի Հովտաշեն գյուղից բերման են ենթարկել 41-ամյա մի տղամարդու, որը տվել է խոստովանական բացատրություն:

Կատարվում է նախաքննություն:

Մառերը հատվել էին անտառապետի գիտությամբ

Հոկտեմբերի 4-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Նոյեմբերյանի անտառտնտեսության «Ձիկատար» անտառապետության 2-րդ պահաբաժնի մոտակայքում հայտնաբերել են արմատախիլ երկու հաճարենի: Նույն օրը ոստիկանություն կասկածանքով բերման են ենթարկվել 41-ամյա մի տղամարդ եւ 33-ամյա անտառապահը: Անտառապահը հայտնել է, որ ծառերն ապօրինի հատվել են իր գիտությամբ:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Զգուշացեք ավտոմեքենայից

Հանրապետության ավտոպարկը մեծանում է, հատկապես շատացել են թանկարժեք մակնիշները, որոնք իրենց տերերին հաճելի պահեր պարգեւելուց զատ, երբեմն նաեւ «փաստի առաջ են կանգնեցնում»: Դրանց պահեստամասերի բարձր գները հանցավոր տարրերի համար դառնում են «յուղոտ պատառ», եւ շարժական գույքը հնարավորինս ապահով պահելու անհրաժեշտություն է առաջանում: Իհարկե, ավտոտրանսպորտային միջոցներ փախցնելու դեպքերը մեզանում մեծ տարածում չունեն, բայց, այդուհանդերձ, հարկավոր է զգոն լինել:

Այսօր կան պահպանման ձայնազդանշանային տարատեսակ համակարգեր, սակայն, դրանց զարգացմանը զուգընթաց, կատարելագործվում են նաեւ հանցագործները: Երբեմն ավտոմեքենաները խոցելի են դառնում հենց տերերի անուշադրության կամ անփութության հետեւանքով:

Ի՞նչ միջոցներ են հարկավոր «երկաթյա նժույգի» պահպանության համար:

Ավտոտնակը լավագույն տարբերակն է բոլոր առումներով: Սակայն եթե մեքենան կայանվում է ավտոտնակում, նախեւառաջ անհրաժեշտ է ավելի հուսալի դարձնել փականներն ու դռները: Առավել հաճախ հանցագործները ավտոտնակ են խուժում դռան կախովի փականը կոտրելու, դռների խոցելի հատվածները սղոցելու եւ ճկելու միջոցով: Հանցագործների մարտավարությունը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է նրանց համար ստեղծել դժվար հաղթահարելի արգելքներ, այն է՝ ավտոտնակի դարպասների ծխնիները պիտի լինեն ներսից, հիմնապատերին լինեն բնիկներ, որտեղ, դարպասը փակ ժամանակ, կմտնեն դռան վրա նախապես տեղադրված շարժական ձողերը:

Խուսափեք դռները կախովի փականով կողպելուց, որոնք հեշտությամբ տեղի են տալիս լինգի, մուրճի եւ սղոցի ուժին:

Ցանկալի է տեղադրել առնվազն երկու փական: Առավել զգուշավորները եւս մեկ լրացուցիչ փական են տեղադրում ներսից եւ դռան անցքից ամեն անգամ ձեռքը մեկնում ու բանալիով բացում են: Ի դեպ, այդ անցքը նույնպես փոքրիկ պատուհան եւ փական է ունենում, որն արդեն բացվում է դրսից:

Աշխատեք տեղադրել բարդ կառուցվածքի փականներ, որոնց բանալիները դժվար է կրկնօրինակել: Արդյունավետ են նաեւ ոչ գործարանային արտադրության, վարպետների կողմից հատուկ պատրաստված մեկ օրինակով փականները: Պարզապես զգուշության համար փական պատվիրեք անծանոթ վարպետի մոտ, որը ձեր ավտոտնակի տեղը չգիտի: Փականները դռանն ամրացրեք ոչ թե զոռելու, այլ մանեկի ու հեղույսի միջոցով, իսկ արտաքին ելուստները քողարկեք:

Երբեմն հանցագործներն ավտոտնակ են խուժում պատը քանդելով: Եթե տնակը քարաշեն է, ապա լավագույն տարբերակը շինարարության ժամանակ նախատեսվածից շատ ամրաններ օգտագործելն է: Սովորաբար հանցագործները նախապես մանրակրիտ ուսումնասիրում են ապագա դեպքի վայրն ու այն խոչընդոտները, որոնք պիտի հաղթահարվեն: Այս առումով՝ առաջնորդվեք «Իմ ավտոտնակն իմ ամրոցն է» սկզբունքով եւ բացառեք անծանոթների մուտքն ավտոտնակ:

Այս բարդ խնդրից կարող եք ձերբազատվել, եթե ավտոտնակում տեղադրեք պահպանման ազդանշանային համակարգ:

Նման ծառայություն կա եւ բավական մատչելի «հաճույք» է:

Ավտոմեքենան փախցնելը կամ դռանից տարբեր իրեր գողանալու հնարավորությունը կարելի է կանխարգելել հակառեւանգման էլեկտրոնային կամ մեխանիկական համակարգերի օգնությամբ: Այսօր շուկան հեղեղված է նման համակարգերով. ամենաժամանակակից էլեկտրոնային ձայնազդանշանային համակարգեր՝ հեռակառավարմամբ, անվադողերի հատուկ մանեկներ, բենզաբաքի եւ ղեկի մեխանիկական փականներ: Շատերը կիրառում են նաեւ մեքենայի սնուցումն ապահովող հատուկ քողարկված ռելեներ, որոնց տեղադրումն ու աշխատանքի առանձնահատկությունները հայտնի են միայն մեքենայատերերին:

Մի քանի պարզունակ խորհուրդ, որոնց կիրառումը դյուրին է եւ անհրաժեշտություն. երբեք մեքենայի բանալիները մի թողեք այրման համակարգում, մեքենան լքելուց առաջ մեկ անգամ եւս համոզվեք, որ դռներն ու պատուհանները փակ են, գիշերը մեքենան կայանեք լուսավորված եւ մարդաշատ տեղերում, հնարավորության դեպքում՝ պատերին շատ մոտ: Մեքենայի սրահում մի թողեք այնպիսի իրեր, որոնք կարող են գայթակղել հանցագործներին, իսկ փաստաթղթերն ամեն անգամ վերցրեք ձեզ հետ:

Անբարո արարք անչափահասների նկատմամբ

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղում մի տղամարդ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել մի անչափահաս աղջկա նկատմամբ: Ոստիկանները ճշտեցին տեղեկության հավաստիությունը, տուժողի եւ կասկածյալի ինքնությունը:

Ըստ օպերատիվ տեղեկությունների՝ 63-ամյա տղամարդը երեք տարի առաջ անապահով վիճակում գտնվող աղջկան ու նրա մորը ապաստանել էր իր տանը: Տղամարդը 2016-2017 թթ. օգտվելով անչափահաս աղջնակի անօգնական վիճակից եւ նրա մոր բացակայությունից, պարբերաբար սեքսուալ բնույթի բռնի գործողություններ էր արել նրա նկատմամբ:

Տուժած աղջիկը եւ նրա մայրը հրավիրվեցին ոստիկանություն: Հոգեբանի եւ մանկավարժի ներկայությամբ 12-ամյա աղջիկը ոստիկաններին պատմեց եղելությունը: Աղջկա մորից ընդունվեց հաղորդում:

Ոստիկանների ձեռնարկած միջոցառումներով պարզվեց նաեւ, որ տղամարդը սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է արել նաեւ իր տանը հյուրընկալված աղջնակի ընկերուհու նկատմամբ: Ոստիկանության բաժին հրավիրված 13-ամյա աղջիկը նույնպես ոստիկաններին պատմեց իր հետ կատարվածը:

Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ճշտվեց կասկածյալի գտնվելու վայրը: Նա սեպտեմբերի 21-ին հայտնաբերվեց իր աշխատավայրում եւ, անչափահասների նկատմամբ սեքսուալ բռնի գործողություններ կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Վաղարշապատի բաժին:

Փաստի առթիվ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Տղամարդը կալանավորված է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Թմրամիջոց պատրաստելու պահին բռնել էին

Ոստիկանությունը շարունակում է թմրանյութերի անօրինական շրջանառության եւ օգտագործման դեմ հետեւողական պայքարը: Օրերս հերթական դեպքը բացահայտեցին Գյումրիի ոստիկանները:

Հոկտեմբերի 1-ին ոստիկանության Մուշի եւ Կումայրիի բաժնի ծառայողները Գյումրիի Գարեգին Նժդեհի փողոցի հարեւանությամբ մի կիսաքանդ շինության մեջ, ապօրինի թմրամիջոց պատրաստելու եւ օգտագործելու պահին, հայտնաբերեցին 33-ամյա մի տղամարդու, որը, պարզվեց, Բորյան փողոցի բնակիչ է:

Նշված շինության զննությամբ ոստիկանները հայտնաբերեցին յուրահատուկ հոտ ունեցող հեղուկով լի տարաներ, պիպոլֆեն գրառմամբ ապակե սրվակ, պիրալգին գրառմամբ դեղահաբերի դատարկ ժապավեն, ներարկիչներ, որոնցից մեկում առկա էր 3,6 մլգ դեղնավուն հեղուկ, յոդի դատարկ սրվակ եւ թմրանյութի պատրաստման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Կասկածվողը հայտնել է, որ ներարկիչում հայտնաբերվածը թմրանյութ է, ինքն է պատրաստել. մի մասն օգտագործել է, մնացածը՝ պահել հետագայում ներարկվելու համար:

Նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն:

Քննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության Մարտունու բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ- հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 6-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Մարտունու բաժին բերման է ենթարկվել 34-ամյա Ռազմիկ Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ հոկտեմբերի 5-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին է ներկայացել 36-ամյա Կարեն Հ.-ն, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 5-ին էջմիածին քաղաքի Պատկանյան փողոցից բերման է ենթարկվել 33-ամյա Ալբերտ Շ.-ն, որը ոստիկանության Աշտարակի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 5-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները Երեւանի Խաչիկ Դաշտենցի փողոցից բերման են ենթարկել 44-ամյա Հայկ Ս.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 5-ին ոստիկանության ՔՀԳՎ ծառայողները Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւանի Թադեւոսյան փողոցից բերման են ենթարկել 34-ամյա Էդգար Ս.-ին, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 3-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո օդանավակայանի ժամանման սրահից բերման է ենթարկվել ՌԴ 55-ամյա քաղաքացի Ռաֆիկ Ա.-ն, որը 1997 թ. մայիսից Ստեփանակերտի իրավապահների կողմից հետախուզվում էր ԱՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 3-ին Ստամբուլ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո օդանավակայանի ժամանման սրահից բերման է ենթարկվել ԻԻՀ 51-ամյա քաղաքացի Սահդ Թ.-ն, որը 2018 թ. նոյեմբերից հետախուզվում էր ԻԻՀ քրեական օրենսգրքի 525 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության էրեբունու բաժնի քրեական հետախույզները հոկտեմբերի 3-ին Երեւանի Արշակունյաց պողոտայից բերման են ենթարկել 63-ամյա Անուշավան Ա.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հին հույն քաղ. գործիչ եւ հռետոր
Ֆրանս. մաթեմատիկոս
Ալբանիա 60 որպէ
Կատվազգի գիշատիչ / Պետրոս 1-ին
Նոտա
... Ախեջակովա
Երաժշտ. ստեղծագործութ.
... Լիեպա / Անգլ. ճարտարապետ
...ի անվան ակումբ (ֆուտբ.)
Հակառակորդ / Գավառ, Այրարատ
Թթվեցրած գինի / Էդիթ ...
«Լակմե» / Դիեգո ...
Իսպանական պար
Հրաբուխ, Ֆիլիպինները / Ճահճագազ
Պտղատու ծառ / Ֆրանսիացի նկարիչ
Սերգեյ ... / Կարեկցանք
Նուրբ բրդով ոչխարներ / Պատմ. մարզ, Վրաստան
«Քեռի ...ի խրճիթը» / Դակար
... Գարդներ
Պինդ վառելանյութ / Շվեդ քիմիկոս
Հռոմ. գրող, փիլիսոփա / Թալան
Կաշվե պարան
Արական, իգական
Անվանում / Անգլ. ֆուտբոլիստ
Յասիր ... / Պատերազմի աստված
Ժողովուրդ, ՌԴ հյուսիս
Եթովպ. կայսերի տիտղոս
Պարարտ
Ջութակ
Ժողովուրդ, Դաղստան / Քաղաք, Լատվիա
Գենադի ...
... Դարչինյան
Կոնֆետ / Ոդիսեւսի կինը
Սեմական լեզու
Բուժանյութ
Աշորա
Ապակե, մետաղե աման
Հարեմ
Հագուստի տարր
Մարմնի մաս
«Սեւ մարդը» (պոեմ)
... տարի
Իսպան. հին ոսկեդրամ / Գրենական պիտույք
Սառը զենք
Դեմիրճյան, պիես
Սիփան
Սենդամթերք
16-րդ դարի իտալ. բանաստեղծ
Հայոց թագավոր
Աղքամարի տաճարի կառուցող / Բրյուս ...
Հիմնարկի ղեկավար
Լիճ, Չինաստան / Երես / Չիր
Ֆիլիպինյան կղզի / Մոլորակ
Ժամանակի միավոր / Դատարկ
Գերման. երգահան / Շինանյութ
Անոթալայնիչ դեղ
Հրամանատար, հին հուն. պոլիս
Վայրի կաղին
Չեխիա / Համեմունք
Ձկան մաշկը պատող նյութ
Միավոր ի պատիվ Գալիլեյի
Տրական, հայցական / Եմենի Արաբ. Հանր.
Երախ / ... Պալաս
Մարշալ, Նապոլեոնի զինակից
Հոկեյ, ֆուտբոլ
Հին շորի կտոր
Անագ, նիկել / ...-...-սի
Ֆրանս. ֆիզիկոս
Արվեստի ոճական ուղղութ.
Անդունդ
Ուսերի ծածկոց
Հռոմի պապի նստավայր
Մայրական ...

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Աշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 11.10 - 17.10

Խոյ - Շատ բան կախված կլինի ձեր արագ որոշումներից ու գործելու ունակությունից ինչպես գործնական, այնպես էլ անձնական հարցում:

Ցուլ - Պետք չէ մտածել, որ նպատակներին կհաջողվի արագ ու հեշտ հասնել: Ճիշտ հակառակը կլինի:

Երկվորյակ - Աստղերը սատարում են ձեզ բազմաթիվ նախաձեռնություններում, եւ դրանից արժե օգտվել:

Խեցգետին - Հնարավոր են խնդիրներ այնտեղ, որտեղ չեք ակնկալում: Պետք է ջանքեր գործադրեք, որ կարգավորեք իրավիճակը:

Առյուծ - Պետք է դիմակայեք տհաճ մարդկանց հետ շփումներին, բարդ, խճճված իրավիճակներում հայտնվելուն:

Կույս - Որոշ Կույսերի սպասում են լուրջ փորձություններ: Պետք է ավելի շատ ուժեր ծախսեք, որ ուղղեք սխալները:

Կշեռք - Պետք է կարեւոր որոշումներ կայացնեք՝ ունենալով նվազագույն ինֆորմացիա:

Կարիճ - Ձեզ սպասվում են հաճելի անակնկալներ, զուգադիպություններ, նոր հնարավորություններ:

Աղեղնավոր - Գործերի ուշացումը խանգարում է ժամանակին սկսածը ավարտին հասցնել, իսկ մարդիկ, ում վրա սովոր եք հույս դնել, չեն աջակցի:

Այծեղջյուր - Հնարավորություն կունենաք օգտակար ծանոթություններ հաստատել, լավ տպավորություն թողնել այն մարդկանց վրա, որոնցից շատ բան է կախված:

Ջրհոս - Պետք չէ հույս ունենալ, որ արագ կլուծեք բարդ խնդիրները: Հանգամանքները կարող են անհաջող լինել:

Ձուկ - Հազիվ թե հաջողվի խուսափել դժվարություններից, բայց պետք է հաղթահարեք խոչընդոտները, ինչի շնորհիվ կգտնեք ելքը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.g7-f8 a3:e7 2.f8:d6:a1x

Խնդիր N2 1.d2-c3 c5:e3 2.c3-b4 a3:c5 3.b6:h7x

Պատրաստեց
ՆՇԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 10.10.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: